# ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի բազմադարյան հարուստ կուլտուրական ժառանգության մեջ զգալի հետաքրքրություն են ներկայացնում նաև բնագիտության պատմության տարբեր բնագավառներին վերաբերող նյութերը, որոնք, ի դեպ, նախառևոլյուցիոն Հայաստանում հատուկ ուսումնասիրության առարկա չեն դարձել։ Պատմաբանները, բանասերները և լեզվաբանները հայագիտությանը նվիրված իրենց աշխատություններում, զանազան առիթներով երբեմն կանգ են առել բնագիտության պատմության առանձին հարցերի վրա, սակայն, հասկանալի է, որ դրանք ո՛չ մեթոդոլոգիական և ո՛չ էլ նյութի ընդգրկման տեսակետից մեզ չեն կարող բավարարել։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում մեր ժողովրդի պատմության մեջ նոր դարաշրջան բաց արին։ Հայաստանի ժողովրդական տնտեսության և հոգևոր կյանքի զարգացման գործում տեղի ունեցավ աննախընթաց առաջխաղացում։

Սովետական գիտնականները լայն հնարավորություն ստացան զբաղվելու նաև բնական գիտությունների պատմության հարցերով։ Այսպես, օրինակ, Հայկական ՍՍՌ ԳԱ ակադեմիկոս Լ. Ա. Հովհաննիսյանը 1946—1947 թ.թ. հրատարակեց «Բժշկության պատմությունը Հայաստանում» իր 5 հատորանոց ստվար աշխատությունը, Տ. Տ. Ղազանչյանը 1955 թ. հրատարակեց «Քիմիան և նրա զարգացման ուղիները Հայաստանում» աշխատությունը, Գ. Բ. Պետրոսյանը 1959 թ. հրատարակեց «Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում» մենագրությունը։ Բնագիտության պատմության բնագավառում հետազոտական աշխատություններ են գրել՝ Գ. Գ. Հարությունյանը, Ա. Գ. Տեր-Պողոսյանը, Ա. Խ. Հարու-

թյունյանը, Ռ. Բ. Գաբրիելյանը, Խ. Ա. Մելիք-Փարսադանյանը, Ա. Ա. Կծոյանը և ուրիշներ։

Այժմ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Նախագահության առընթեր Բնագիտության և տեխնիկայի պատմության հանձնաժողովը իր առջև խնդիր է դրել շարունակել ուսումնասիրությունները բնագիտության պատմության ասպարեզում և արժեքավորել այն, ելնելով մարքս-լենինյան մեթոդոլոգիական դիրքերից։

Հանձնաժողովը հրատարակելով գիտական աշխատությունների ժողովածուի առաջին համարը, որտեղ հիմնականում զետեղված են հանձնաժողովի գիտական սեսիայում (V, 1958 թ.) ու բնագիտության և տեխնիկայի պատմության համամիութենական գիտական կոնֆերանսում (V—VI, 1959 թ.) կարդացված զեկուցումները, գտնում է, որ այն կնպաստի գիտական հետազոտությունների ծավալմանը այդ բնագավառում, ինչպես և մեր երիտասարդ սերնդի դաստիարակման գործին, օգտակար կլինի նաև բուհերում գիտությունների պատմությամբ զբաղվողներին։

Հանձնաժողովը գտնում է, որ նման ժողովածուների և առանձին մենագրական աշխատությունների հրատարակությամբ անհրաժեշտ նյութեր կնախապատրաստվեն Հայաստանի բնագիտության և տեխնիկայի ամբողջական պատմության շարադրության համար։